խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, ինչպես նաև դատական ակտով բռնա-գանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբե-րակցությունից: (...)»:

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն. «1. Դատական ծախսերի հետ կապված պահանջ-ները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»:

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին և հաշվի առնելով հայցի բավարարմամբ պայմանավորված ատարանը գտնում է, որ դատական ծախսերը պետք է կրի Պատասխանողը, ինչից ելնելով պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման՝

- 67205 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար.

- 50000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար՝ հիմք ընդունելով, որ ներկայացվել է «Ավետիսյան Լեգալ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի՝ ի դեմս տնօրեն Միքայել Ավետիսյանի ու «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի միջև 05.11.2024թ. կնքված հանձնա-ռարության պայմանագիրը, որի 3-րդ կետի համաձայն պայմանագրի գինը կազմում է 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, դրա շրջանակներում փաստաբան Միքայել Ավետիսյանի կողմից դատավարական գործողությունների կատարումը, գործը քննվել է հատուկ հայցային վարույթի կարգով՝ առանց դատական նիստերի, ծառայությունները մատուցվել են հայցադիմումի կազմմամբ և ներկայացմամբ, որն իր հերթին ենթադրում է իրավական խորհրդատվության տրամադրում, ապացույցների հավաքագրմանն ուղղված էական ջանքեր չեն գործադրվել և ներկայացված ապացույցները հանդիսացել են Հայցվորի տիրապետման ներքո գտնվող:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. Հայցը բավարարել՝ պարտավորեցնել ՀՀ կրթության գիտության

մշակույթի և սպորտի նախարարությանն ընդունել 18.07.2024թ.-ին կնքված ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-24/56-1 ծածկագրով պետության կարիքների համար ծառայության մատուցման պետական գնման պայմանագրով «Ամա Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից մատուցած ծառայությունը:

2. Որպես դատական ծախս՝ պարտավորեցնել ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարությունից հօգուտ Ամա Փրոդաքշն» ՍՊԸ-ի բռնագանձել՝

- 67205 (վաթսունյոթ հազար երկու հարյուր հինգ) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար.
- 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Մնացած մասով դատական ծախսերի պահանջը մերժել և դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում կկատարվի Հարկադիր կատարումն ապա-հովող ծառայության կողմից՝ Պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողո-քարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Մխեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am